ՄԵԾԱՄՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-22/48-1

Ք. Մեծամոր «06» հոկտեմբերի 2022թ.

Մեծամորի համայնքապետարանը ի դեմս համայնքի ղեկավար՝ Վահրամ Խաչատրյանի, ով գործում է «ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Եղիազարյանի, որը գործում է «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Նալբանդյան բնակավայրի երաժշտական դպրոցի ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքներ (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը և տեխնիկական հսկողության Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 30 օրացուցային օրվա ընթացքում:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օր՝ եթե նախագծա-նախահաշվային փաստաթղթերով այլ ժամկետ սահմանված չէ: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 8,400,000.00 (ութ միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ, որից 1,400,000.00 (մեկ միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում գնորդը վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում: Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված պայմանագրի դեպքում տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրի պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3

(երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն

լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին է ներկայացնում համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Մեծամորի համայնքապետարան	**Էլիտ Հիլզ ՍՊԸ**
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի	**Ք.Երևան Քաջազնունի 1**
վարչական կենտրոն 1	**Էվոկաբանկ ՓԲԸ**
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	**Հ/Հ 1660012311570100**
Հ/Հ 900332001529	**ՀՎՀՀ 04421922**
ՀՎՀՀ 04440608	
համայնքի ղեկավար----------Վահրամ Խաչատրյան	Տնօրեն---------- Հ.Եղիազարյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված 1
«06» հոկտեմբերի 2022թ. կնքված
ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-22/48-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

աշխատանքի						կատարման	
Միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Հատկանիշները (տեխնիկական բնութագիր)	Չափման միավորը	Ընդհանուր քանակը	Ընդհանուր գումար/ ՀՀ դրամ	Հասցեն	Ժամկետը
45231129/501	ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Նալբանդյան բնակավայրի երաժշտական դպրոցի ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքներ	ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Նալբանդյան բնակավայրի երաժշտական դպրոցի ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքների կատարման ծավալաթերթ-նախահաշիվը ներկայացված է սույն պայմանագրի Հավելված 1.1-ով, իսկ օրացուցային գրաֆիկը Հավելված 1.2-ով: Աշխատանքների կատարման համար անհրաժեշտ բոլոր նյութերը, գործիքները, տրանսպորտային միջոցները ապահովում է կատարողը/կապալառուն իր միջոցներով:	դրամ	1	8,400,000.00	ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Նալբանդյան բնակավայր	Պայմանագիրը կնքվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվելու է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը և տեխնիկական հսկողության Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 30 օրացուցային օրվա ընթացքում

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Մեծամորի համայնքապետարան
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի
վարչական կենտրոն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900332001529
ՀՎՀՀ 04440608

համայնքի ղեկավար----------Վահրամ Խաչատրյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Էլիտ Հիլզ ՍՊԸ

Ք.Երևան Քաջազնունի 1

Էվոկաբանկ ՓԲԸ

Հ/Հ 1660012311570100

ՀՎՀՀ 04421922

Տնօրեն---------- Հ.Եղիազարյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 1.1
« 06 » հոկտեմբեր 2022թ. կնքված
ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-22/48-1 ծածկագրով պայմանագրի

Ծավալաթերթ - նախահաշիվ

ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Նալբանդյան բնակավայրի երաժշտական դպրոցի ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքների

NN	Հիմնավորումը	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Ծավալը	Միավորի ընդհանուր արժեքը	Ընդհանուր արժեքը
					հազ. դրամ	հազ. դրամ
1	2	3	4	5	6	7
		Ջեռուցում				
1	E19-6	Ջեռուցման միակոնտուրային կաթսայի տեղադրում Q=45կվտ, N=85Վտ /առանց ծխնելույզի/	հատ	2	200.00	400.00
2	շուկա	Կաթսայի ծխատար /գործարանային/	հատ	2	35.00	70.00
3	շուկա	Ծխատարի երկարացում 1.5մ, AL 5 SST SP	հատ	2	15.00	30.00
4	E18-165	Շրջանառու պոմպ G=4մ^3/ժամ, H=10մ	հատ	2	25.00	50.00
5	E18-134	Ընդարձակման մեմբրանային անոթ V=80լ	հատ	2	30.00	60.00
6	E18-112	Ջեռուցման ալյումինե մարտկոցների տեղադրում	էքմ	131.3	1.52	199.50
7	շուկա	Ջեռուցման ալյումինե մարտկոցների արժեքը H=500մմ	սեկ-ցիա	375	4.50	1687.50
8	12-811-2	Փական PPR Φ32x32 կեսպտույտ	հատ	30	3.00	90.00
9	շուկա	Փոխակերպիչ 1M"x3/4"F	հատ	12	3.00	36.00
10	12-811-1	Փական PPR Φ20x20 կեսպտույտ	հատ	24	2.00	48.00
11	12-811-1	Փական PPR Φ40x40 կեսպտույտ	հատ	16	4.00	64.00
12	12-811-1	Փական PPR Φ50x50 կեսպտույտ	հատ	6	5.00	30.00
13	12-811-1	Փական PPR Φ63x63 կեսպտույտ	հատ	2	6.00	12.00
14	E18-212	Զտիչ Φ20x20 PPR	հատ	2	3.00	6.00
15	12-811-1	Փական Φ1/2"M շտուցերով	հատ	4	3.00	12.00
16	շուկա	Փոխակերպիչ Φ32X1" F (H) PPR	հատ	18	3.00	54.00
17	շուկա	Փոխակերպիչ Φ20X1/2" F (H) PPR	հատ	12	2.00	24.00
18	շուկա	Փոխակերպիչ Φ20X1/2" M (H) PPR	հատ	12	2.00	24.00
19	շուկա	Եռաբաշխիչ Φ25x1/2"Fx25 PPR	հատ	12	2.00	24.00
20	շուկա	Եռաբաշխիչ Φ1/2" FxFxF	հատ	9	0.20	1.80
21	շուկա	Նիպել Φ1/2" MxM	հատ	8	0.40	3.20
22	շուկա	Փոխակերպիչ Φ3/4"M x1/2"M	հատ	4	3.00	12.00
23	շուկա	Մետաղ. խող., գազի 3/4 (50-100սմ)	հատ	4	2.00	8.00
24	շուկա	Մարտկոցի մոնտաժման կոմպլեկտ	հատ	36	2.00	72.00
25	շուկա	Միջադիր	հատ	92	1.00	92.00
26	շուկա	Մարտկոցի կախիչ	հատ	36	2.50	90.00
27	12-811-1	Հետադարձ գծի արբերիչ (լրիվ պտույտ)	հատ	36	2.50	90.00
28	12-811-1	Ջեռքի կարգ. արբերիչ	հատ	36	2.50	90.00
29	շուկա	Փոխակերպիչ 40X1"1/4" M (H) PPR	հատ	4	4.00	16.00
30	շուկա	Եռաբաշխիչ Φ63x63x63 PPR	հատ	18	1.00	18.00
31	շուկա	Եռաբաշխիչ Φ63x50x63 PPR	հատ	4	1.00	4.00
			հատ	2	1.00	2.00

33	շուկա	Եռաբաշխիչ Φ50x50x50 PPR	հատ	20	1.00	20.00
34	շուկա	Եռաբաշխիչ Φ50x40x50 PPR	հատ	4	1.00	4.00
35	շուկա	Եռաբաշխիչ Φ40x40x40 PPR	հատ	32	1.00	32.00
36	շուկա	Եռաբաշխիչ Φ40x32x40 PPR	հատ	24	1.00	24.00
37	շուկա	Եռաբաշխիչ Φ40x25x40 PPR	հատ	16	1.00	16.00
38	շուկա	Եռաբաշխիչ Φ40x20x40 PPR	հատ	40	1.00	40.00
39	շուկա	Եռաբաշխիչ Φ32x32x32 PPR	հատ	60	0.50	30.00
40	շուկա	Եռաբաշխիչ Φ32x25x32 PPR	հատ	60	0.40	24.00
41	շուկա	Եռաբաշխիչ Φ32x20x32 PPR	հատ	180	0.40	72.00
42	շուկա	Եռաբաշխիչ Φ25x25x25 PPR	հատ	36	0.40	14.40
43	շուկա	Եռաբաշխիչ Φ25x20x25 PPR	հատ	84	0.40	33.60
44	շուկա	Եռաբաշխիչ Φ25x20x20 PPR	հատ	80	0.40	32.00
45	շուկա	Եռաբաշխիչ Φ20x20x20 PPR	հատ	44	0.40	17.60
46	շուկա	Անկյուն 63x63 PPR 90	հատ	16	0.40	6.40
47	շուկա	Անկյուն 63x63 PPR 45	հատ	12	0.40	4.80
48	շուկա	Անկյուն 50x50 PPR 90	հատ	22	0.40	8.80
49	շուկա	Անկյուն 50x50 PPR 45	հատ	10	0.40	4.00
50	շուկա	Անկյուն 40x40 PPR 90	հատ	80	0.40	32.00
51	շուկա	Անկյուն 40x40 PPR 45	հատ	40	0.40	16.00
52	շուկա	Անկյուն 32x32 PPR 90	հատ	120	0.40	48.00
53	շուկա	Անկյուն 32x32 PPR 45	հատ	100	0.40	40.00
54	շուկա	Անկյուն 25x25 PPR 90	հատ	140	0.40	56.00
55	շուկա	Անկյուն 25x25 PPR 45	հատ	80	0.40	32.00
56	շուկա	Անկյուն 20x20 PPR 90	հատ	320	0.40	128.00
57	շուկա	Անկյուն 20x20 PPR 45	հատ	140	0.40	56.00
58	շուկա	Շրջանցում Φ32 PPR	հատ	10	0.40	4.00
59	շուկա	Շրջանցում Φ25 PPR	հատ	10	0.40	4.00
60	շուկա	Շրջանցում Φ20 PPR	հատ	10	0.40	4.00
61	շուկա	Փոխակերպիչ Φ63x50 PPR	հատ	4	0.40	1.60
62	շուկա	Փոխակերպիչ Φ63x40 PPR	հատ	16	0.40	6.40
63	շուկա	Փոխակերպիչ Φ63x32 PPR	հատ	8	0.40	3.20
64	շուկա	Փոխակերպիչ Φ50x40 PPR	հատ	12	0.40	4.80
65	շուկա	Փոխակերպիչ Φ50x32 PPR	հատ	8	0.40	3.20
66	շուկա	Փոխակերպիչ Φ40x32 PPR	հատ	30	0.40	12.00
67	շուկա	Փոխակերպիչ Φ40x25 PPR	հատ	6	0.40	2.40
68	շուկա	Փոխակերպիչ Φ40x20 PPR	հատ	6	0.40	2.40
69	շուկա	Փոխակերպիչ Φ32x25 PPR	հատ	30	0.40	12.00
70	շուկա	Փոխակերպիչ Φ32x20 PPR	հատ	8	0.40	3.20
71	շուկա	Փոխակերպիչ Φ25x20 PPR	հատ	8	0.40	3.20
72	շուկա	Փոխակերպիչ Φ63x63 PPR	հատ	8	0.40	3.20
73	շուկա	Փոխակերպիչ Φ50x50 PPR	հատ	10	0.40	4.00
74	շուկա	Փոխակերպիչ Φ40x40 PPR	հատ	40	0.40	16.00
75	շուկա	Փոխակերպիչ Φ32x32 PPR	հատ	60	0.40	24.00
76	շուկա	Փոխակերպիչ Φ25x25 PPR	հատ	40	0.40	16.00
77	շուկա	Փոխակերպիչ Φ20x20 PPR	հատ	60	0.40	24.00
78	E16-266	Խողովակաշարի անցկացում PPr-Al-PEX պոլիպրոպիլենային ալյումինե շերտով խողովակներից Φ63x7մմ, հիդրավլիկ փորձարկումով	գմ	32.0	3.00	96.00
79	E16-265	Խողովակաշարի անցկացում PPr-Al-PEX պոլիպրոպիլենային ալյումինե շերտով խողովակներից Φ50x5.5մմ, հիդրավլիկ փորձարկումով	գմ	12.0	4.00	48.00
80	E16-264	Խողովակաշարի անցկացում PPr-Al-PEX պոլիպրոպիլենային ալյումինե շերտով խողովակներից Φ40x5մմ, հիդրավլիկ փորձարկումով	գմ	40.0	2.00	80.00
81	E16-263	Խողովակաշարի անցկացում PPr-Al-PEX պոլիպրոպիլենային ալյումինե շերտով խողովակներից Φ32x4մմ, հիդրավլիկ փորձարկումով	գմ	64.0	1.00	64.00

82	E16-262	Խողովակաշարի անցկացում PPr-Al-PEX պոլիպրոպիլենային ալյումինե շերտով խողովակներից Φ25x3.25մմ, հիդրավլիկ փորձարկումով	գմ	114.0	1.00	114.00
83	E16-261	Խողովակաշարի անցկացում PPr-Al-PEX պոլիպրոպիլենային ալյումինե շերտով խողովակներից Φ20x3մմ, հիդրավլիկ փորձարկումով	գմ	96.0	0.95	91.20
84	E20-696	Մետաղակոնստրուկցիաներ սարքերի եւ խողովակների ամրացման համար	կգ	120.0	0.50	60.00
85	շուկա	Պտուտակ դյուպել N7	հատ	960	0.01	9.60
86	շուկա	Պոլիմեր.պարուր-ժապավեն մեծ 3/4	հատ	40	1.00	40.00
87	շուկա	Խծուծ	կգ	0.3	7.00	2.10
88	շուկա	Ինքնակպչուն ջերմամեկուսիչ արտացոլող էկրան /մարտկոցների հետևի պատին/	մ^2	24.0	1.00	24.00
89	E16-262	Խողովակաշարի անցկացում պոլիպրոպիլենային խողովակներից ∅25x4.2մմ հիդրավլիկ փորձարկումով	գմ	48.0	0.60	28.80
90	12-811-1	Փականներ Φ15մմ	հատ	4	1.00	4.00
91	12-811-1	Փականներ Φ20մմ	հատ	2	1.00	2.00
92	12-811-1	Փականներ Φ25մմ	հատ	2	1.00	2.00
93	E17-96 K=0.5	Ջրատաքացուցիչի տեղադրում «Արիստոն» տիպի N=1.2կվտ/ժ, V=50լ	հատ	1	60.00	60.00
94	E16-295	Ջրաչափի տեղադրում ∅ 40մմ	հատ	1	24.00	24.00
95	շուկա	Զտիչ ∅ 40մմ	հատ	1	3.00	3.00
96	E16-211	Միացում գործող ցանցին	տեղ	1	12.00	12.00
97	շուկա	Ֆիտինգներ /տարբեր/	հատ	40	0.20	8.00
98	P23-41	Անցքերի բացում պատերում և միջնորմներում	հատ	37	1.00	37.00
99	E46-53	Անցքերի բացում ծածկերում	հատ	3	2.00	6.00
100	E15-246a	Անցքերիի փակում	մ^2	3.50	2.00	7.00
101	E18-165	Շրջանառու համակարգի լրասնուցման պոմպ Kaldo ջրի պոմպ, QB -60	հատ	2	60.00	120.00
102	E17-92	Մաքրված ջրի բաք 200լ լրասնուցման համար	հատ	2	45.00	90.00
103	P14-418	Պատերի ներկում լատեքսային ներկով, ծեփամածկմամբ, լավորակ	մ^2	3.50	2.00	7.00
		Ընդամենը տվյալ բաժնով առանց սարքավորումների				5404.90
		Սարքավորումներ				
1	E19-6	Ջեռուցման միակոնտուրային կաթսայի տեղադրում Q=42կվտ, N=85Վտ /առանց ծխնելույզի/ Одноконтурный котел отопления Q=42квт, N=85вт (без дымохода/	հատ штук	2	580.00	1160.00
2	շուկա	Կաթսայի ծխատար /գործարանային/ дымоход для котла /заводской/	հատ штук	2	30.00	60.00
3	E18-165	Շրջանառու պոմպ G=5մ^3/ժամ, H=8մ Циркуляционный насос G=5м3/час, H=8м	հատ штук	2	60.00	120.00
4	E18-134	Ընդարձակման մեմբրանային անոթ V=80լ Мембарная колба V=80л	հատ штук	2	35.00	70.00
5	E17-96 K=0.5	Ջրատաքացուցիչի տեղադրում «Արիստոն» տիպի N=1.2կվտ/ժ, V=50լ Водонагреватель типа «Ariston» N = 1.2 кВт / ч, V = 50л	հատ штук	1	65.10	65.10
6	E18-165	Շրջանառու համակարգի լրասնուցման պոմպ Kaldo ջրի պոմպ, QB -60	հատ	2	60.00	120.00
		Ընդամենը սարքավորումներИтого по оборудованиям				

		Ընդամենը բոլոր բաժիններով + սարքավորումներ				7,000.00
		ԱԱՀ, 20%				1,400.00
		Ընդամենը				8,400.00

*Արժեքը ներառում է բոլոր ծախսերը, ներառյալ «Շահույթը» և ԱԱՀ-ն՝ 20%

** Աշխատանքների կատարման համար անհրաժեշտ բոլոր նյութերը, գործիքները, տրանսպորտային միջոցները ապահովում է կատարողը/կապալառուն իր միջոցներով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Մեծամորի համայնքապետարան
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի
վարչական կենտրոն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900332001529
ՀՎՀՀ 04440608

համայնքի ղեկավար---------Վահրամ Խաչատրյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Էլիտ Հիլզ ՍՊԸ

Ք.Երևան Քաջազնունի 1

Էվոկաբանկ ՓԲԸ

Հ/Հ 1660012311570100

ՀՎՀՀ 04421922

Տնօրեն՝---------- Հ.Եղիազարյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 1.2
« 06 » հոկտեմբերի 2022թ. կնքված
ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-22/48-1 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Նալբանդյան բնակավայրի երաժշտական դպրոցի ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքների կատարման	Սույն պայմանագիրը և տեխնիկական հսկողության Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	Աշխատանքների սկզբից 30 օրացուցային օրվա ընթացքում
ԸՆԴԱՄԵՆԸ		Սույն պայմանագիրը և տեխնիկական հսկողության Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	Աշխատանքների սկզբից 30 օրացուցային օրվա ընթացքում

*Պայմանագիրը կնքվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրում ժամկետի հաշվարկն իրականացվելու է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Մեծամորի համայնքապետարան
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի վարչական կենտրոն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900332001529
ՀՎՀՀ 04440608

համայնքի ղեկավար----------Վահրամ Խաչատրյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Էլիտ Հիլզ ՍՊԸ
Ք.Երևան Քաջազնունի 1
Էվոկաբանկ ՓԲԸ
Հ/Հ 1660012311570100
ՀՎՀՀ 04421922

Տնօրեն ---------- Հ.Եղիազարյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« 06 » հոկտեմբերի 2022թ. կնքված
ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-22/48-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-22/48 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում պայմանագիրը կնքվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և վճարման ժամանակացույցը լրացվելու և կնքվում է Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

Գնման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսվելու են Մեծամորի համայնքապետարանի հրապարակած փոփոխված և լրացված գնման պլանի համապատասխան անվանատողերով:

Վճարումը կիրականացվի ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ամիսներին:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Վճարման ենթակա գումարները ներկայացվելու են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Մեծամորի համայնքապետարան	**Էլիտ Հիլզ ՍՊԸ**
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի վարչական կենտրոն 1	**Ք.Երևան Քաջազնունի 1**
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	**Էվոկաբանկ ՓԲԸ**
Հ/Հ 900332001529	**Հ/Հ 1660012311570100**
ՀՎՀՀ 04440608	**ՀՎՀՀ 04421922**
համայնքի ղեկավար----------Վահրամ Խաչատրյան	Տնօրեն----------Հ.Եղիազարյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված թիվ 4
« 06 » հոկտեմբեր 2022թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« 06 » հոկտեմբերի 2022թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

06.10.2022 թվականին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-22/48-1 գնման պայմանագրի

ք. Մեծամոր «25» 10 2022թ.

Մեծամորի համայնքապետարանը ի դեմս համայնքի ղեկավար՝ Վ. Խաչատրյանի, ով գործում է «ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Եղիազարյանի, որը գործում է «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ, հիմք ընդունելով 06.10.2022թ. կնքված N ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-22/48-1 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5, 8.15 կետերը և հաշվի առնելով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման պահանջը, նախատեսվել են ֆինանսական միջոցներ, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության և Պայմանագրով նախատեսված աշխատանքի ձեռքբերման համար հատկացված 8,400,000.00 (ութ միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն, շրջանակներում գնում կատարելու նպատակով Կողմերը որոշեցին.

1. Պայմանագրի Հավելված N 1-ով ներկայացված աշխատանքի կատարման ժամկետը շարադրել նոր խմբագրությամբ, հետևյալ կերպ՝ *«Սույն համաձայնագիրը և տեխնիկական հսկողության Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 30 օրացուցային օրվա ընթացքում»*:

2. Պայմանագրի Հավելված N 2-ով ներկայացված «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ը փոփոխել և հաստատել ըստ սույն համաձայնագրի Հավելված 1-ի:

2. Այլ պայմաններ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Կողմերի պատասխանատվության հետ կապված այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի թիվ 1 հավելվածը հանդիսանում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Մեծամորի համայնքապետարան
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի վարչական կենտրոն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900332239061
ՀՎՀՀ 04440608

համայնքի ղեկավար----------Վ. Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Էլիտ Հիլզ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Քաջազնունի 1
«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1660012311570100
ՀՎՀՀ 04421922

տնօրեն----------Հ. Եղիազարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1
«06» հոկտեմբերի 2022թ. կնքված
ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-22/48-1 ծածկագրով պայմանագրի
«25» հոկտեմբերի 2022թ. կնքված
թիվ 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Աշխատանք														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45231129/501	ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Նալբանդյան բնակավայրի երաժշտական դպրոցի ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքներ	-	-	-	-	-	-	-	-	-	8,400,000.00	8,400,000.00	8,400,000.00	8,400,000.00

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Մեծամորի համայնքապետարան
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի վարչական կենտրոն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900332239061
ՀՎՀՀ 04440608

համայնքի ղեկավար----------Վ. Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Էլիտ Հիլզ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Քաջազնունի 1
«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1660012311570100
ՀՎՀՀ 04421922

տնօրեն----------Հ. Եղիազարյան
(ստորագրություն)
Կ.Տ.